

թեան սահման մը եւ չափ կը փափագեր, որպէսզի գեղծմանց չհանդիպէր, եւ որպէսզի իմանան թէ ինք իշխանութեան աչք չունէր՝ երդում ըրաւ թէ իրեն տրուած ոիցէ ձայն ինք պիտի չընդունէր: Այս խօսքերն ըսելով թողուց ժողովքը եւ խլաթայ նաւահանգստէն նաւ մտաւ եւ ելաւ Աղթամարայ կղզուոյն պալատը, վասնզի սաստիկ հիւանդ կը գտներ ինքզինքը:

Ի՞նչ ըրին հայ նախարարք, մենք չենք ուզեր դատել, այլ ահա մէջտեղ կը դնենք ժամանակակից պատմագրի մը խօսքերը, եւ ընթերցողք թող դատեն:

«Իսկ իշխանին Յայոց, որ ի Իւնաց եւ ի Տաճկաց կողմանէ, Համագասպ եւ Մուշեղ, եւ այլն ամենայն եկեալ ի մի վայր միաբանեցան, եւ արարին ընդ միմեանս հաշտութիւն, զի մի եղիցի ի մէջ Նոցայ սուր եւ արիւնհեղութիւն, եւ անցուցին խաղաղութեամբ զաւուրըս ձմերայնւոյն, զի եւ զշինականս ապրեցուցանեն: Քանզի Ռշտունեաց Տէրն անկաւ եախտս հիւանդութեան եւ չոքաւ անկալ եաղթամար կղզին: Եւ ոչ գոյր նմա լինիլ կարողութիւն ելանել արտաքս կամ խորհիլ ինչ, եւ բաժանեցին գերկիրն ըստ թւոյ իւրաքանչիւր հեծելոց եւ կարգեցին հարկապահանջս ոսկւոյ եւ արծաթոյ:

Եւ աստ էր տեսանել զաղէտս տարակուսի, զօրէն հիւանդաց եօրժամ տագնապեցին ցաւն եւ հատանիցէ ի խօսից, այնպէս ինչ եղէն, զի ոչ գոյր մարդկան տեղի փախստի եւ թագստեան եւ ոչ խնայել ի ներքուստ, այլ որպէս ոք զի անկցի ի ծով՝ եւ ոչ կարիցէ գտանել:

Եւ իբրեւ ետես զայս Ռշտունեաց Տէրն խնդրեաց իւր զօրս յիսմայելացոց զի հարցէ զհայն եւ հալածական արասցէ եւ զուիրս սատակեցէ ի սուր սուսերի»:

Ուեւ Յայու ծանր է կարդալ այս տողերը, ծանր էր նաեւ այն մարդուն, որ բոլոր կենաց մէջ աշխատէր էր Հայաստան հայով փրկելու եւ միաբանութիւն այդ բանին համար հաստատելու, տեսնել այդ միաբանութիւնն ի վնաս ժողովրդեան դառնալ, անտանելի հարստահարութեանց գործիք լին իլ եւ երկրին կործանմունքը հայ ձեռքերէ տեսնել: Ուստի յուսահատ՝ այն դեղին կը դիմէր, որ թոյն էր եւ ոչ դեղթափ, այն երկաթին կը դիմէր, որ վիրաբոյժի դանակին առողջութիւնը չէր կրնար բերել՝ այլ մահ:

Եկաւ արարացին, երբ միաբանութիւնը քակտեցաւ, տիրեց երկրին եւ առաւ պատանդ տարաւ նախ զթեոդորոս բոլոր իւր ընտանեօք, եւ ամբողջ հայ նախարարութեան ծաղիկը ժողուեց իջեցուց ի Դամասկոս: